ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1963 Общественные науки

Է. Ֆ. Կարապետյան

ՊԱՏՐՈՆԻՄԻԱՅԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

(Ըստ 1961 թ. գիտարշավախմբի նյութերի)

Հանրապետության Նոյեմբերյանի շրջանում Հայկական ՍՍՌ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմակերպած ազգագրական գիտարշավի ժամանակ մեր հավաքած դաշտային նյութն ընդգրկում է գյուղացիական բնակչության ինչպես ժամանակակից կենցաղն ու մշակույթը, նույնպես և անցյալի հասարակական ու ընտանեկան կենցաղը։

Հայերի անցյալի հասարակական կենցաղին վերաբերող բազմազան ու ընդարձակ նյութերի միջից նպատակահարմար ենք գտնում առանձնացնել դեռևս 19-րդ դարի վերջի, մասամբ էլ 20-րդի սկզբի հայ գյուղի իրական կյանքում համայնական-տոհմային կարգերի վերապրուկների դերը բնորոշելու հնարավորություն ընձեռող նյութը։

Տոհմային կարգերի ինստիտուտների վերապրուկային ձևերը կարելի է բաժանել երկու խմբի. առաջին խումբը՝ իրենց նախասկզբնական բովանդակությունը կորցրած, հայերի կենցաղում լոկ որպես ծիսային, մնացուկային ձևեր պահպանած, դրանով իսկ գյուղի սոցիալական կյանքում որևէ էական դեր չխաղացող վերապրուկներն են. և երկրորդ խումբը՝ այդ տոհմային հարաբերությունների այն վերապրուկային ձևերն են, որոնք զգալի տեղ են բռնել հայ գյուղի սոցիալական, հասարակական և արտադրական կյանքում ոչ միայն զարգացած ֆեոդալիզմի պայմաններում, այլև արտադրության կապիտալիստական եղանակի ժամանակ, իսկ դրանցից մի քանիսը՝ նույնիսկ կոլտնտեսային շինարարության առաջին տարիներին։

Այս առումով շատ ուշադրավ է Հայաստանի դանազան շրջաններում և մասնավորապես Նոյեմբերյանի շրջանում գրառված ազգ[1] ազգակցական խումբը։

Ազգատոհմը դա նախահայր-հիմնադրից (որի անունը դառնում է համազգի անվանում) արական գծով յոթից-ութ, երբեմն ինը սերունդ, իրենց վարընթաց բոլոր ճյուղավորություններով հաշված, ազգակցական խումբն է։ Այսպես, Բարանա (այժմ Նոյեմբերյան) գյուղում նախապես հաշվվել է յոթ ազգ՝ Ամիրաղյաններ, Թեմրազյաններ, Փոփախչյաններ, Ղազինյաններ, Ասատրյաններ, Մանթաշյաններ, Մարգարյաններ՝ առավել հին բնակիչները. մի փոքր ուշ ավելացել է ևս տասը տուն։ Այդ տասնյոթ տնից, հետագայում աճելով և տրոհվելով, կազմվել է տասնյոթ ազգատոհմ, որոնք ներկայումս հաշվվում են 710 կոլտնտեսային ծուխ։ Առավել բազմամարդ ազգատոհմերն են՝ Անանյաններինը, այժմ բաղկացած 103 ծխից, Ամիրաղյաններինը՝ 99 ծխից, Մամյաններինը՝ 95 և այլն։ Ճիշտ է, կան այնպիսի ազգատոհմեր, որոնք հաշվվում են

---

1 *Քանի որ ազգ տերմինը ընդունված է ավելի ընդարձակ հասարակական հասկացողություն արտահայտելու համար, այստեղ այն փոխարինված է ազգատոհմ տերմինով։*

ընդամենը 4—7 ազգակից ընտանիք։ Հիշյալ ազգատոհմերի հիմնավորվելը տվյալ գյուղում վերաբերում է 18-րդ դարի երկրորդ կեսին։ Ազգատոհմերի հիմնավորման այդքան ոչ խոր պատմությունը հնարավորություն է տալիս, հիմնվելով բանասացների պատմածների վրա՝ համալրված տապանագրերով և առանձին ազգատոհմերի այս կամ այն ներկայացուցիչների կազմած ծագումնաբանական սխեմաներով, բավական հստակորեն վերականգնել առանձին ազգատոհմերի կազմավորման ընթացքը։ Հետազոտված շրջանում գրառված է յոթ ազգատոհմի պատմություն, սակայն մենք սահմանափակվում ենք մի ազգատոհմի պատմության շարադրմամբ, որն իր հիմնական գծերով ընդհանուր է Նոյեմբերյանի շրջանի ազգատոհմերի համար։ Տարբերությունը դրսևորվում է այս կամ այն ազգատոհմի հիմնավորման ժամանակում, հետևաբար և՝ վերընթաց սերունդների թվի մեջ։ Որպես օրինակ վերցնենք Մամյաններին կամ, ինչպես գյուղում են ասում՝ Բարանց ազգատոհմը։ Բարանց ազգատոհմի հիմնադիր համարում են Արևմտյան Հայաստանից (այժմ՝ Թուրքիայի կազմում) գաղթած և 18-րդ դարի երկրորդ կեսին Բարանա գյուղում հիմնավորված գզբար Բարին։ Բնակվելով Բարանայում, Բարը ամուսնանում է տեղարնակ Ամիրաղյանների ազգատոհմից մի աղջկա հետ։ Նրանից ծնվում է մի որդի՝ Մամը, Մամն ունենում է չորս որդի՝ Պապը (ծնված 1854 թ.), Խաչատուրը (1859 թ.), Արազը (1875 թ.), Ալեքսանը (ծննդյան թիվը անհայտ է)։ Ժամանակի ընթացքում, բազմացման հետևանքով, Մամի ընտանիքը որդիների թվին համապատասխան բաժանվում է չորս դուստր ընտանիքների։ Հետագայում եղբայրների ընտանիքները տրոհվում են մեծ և փոքր ընտանիքների, և այսպես մինչև ութերորդ սերունդը, իսկ ազգատոհմի իններորդ սերունդը ներկայումս ներկայացնում են երեխաները և ամուրիները։ Այսպիսով, Բարանց ազգատոհմը կամ ըստ երկրորդ անվան՝ Մամյանները(վերջինս՝ Բարի որդի Մամի անվամբ), մոտ երկու հարյուր տարվա ընթացքում, սկսած ազգատոհմի նախահայր-հիմնադրի Բարանա գյուղում բնակվելու ժամանակից, մեծ և փոքր ընտանիքների տրոհման միջոցով հետևողականորեն բազմացել է, ըստ որում նրա կենդանի մասը հաշվվում է 95 ընտանիք։

Հետազոտված շրջանում ազգատոհմ ընտանեկան-ազգակցական կոլեկտիվի մեջ մտել են այն ընտանիքները, որոնք բնակավորվել են միևնույն գյուղում։ Տվյալ ազգատոհմից ուրիշ գյուղ վերարնակված ընտանիքն սկզբում հաշվվել է այդ ազգատոհմի կազմում, բայց ժամանակի ընթացքում, չորրորդ-հինգերորդ սերնդում, նա կազմել է ազգատոհմի նոր խոտորնակի գիծ և նրա հաշվումն արդեն կատարվել է վերարնակված ընտանիքի գլխավորից։ Եթե ազգատոհմից անջատված ճյուղը հաշվվում է յոթ և ավելի սերունդ, այն ընկալվում է որպես ինքնուրույն ազգատոհմ նույնիսկ այն դեպքում, երբ պահպանում է իր հին համազգատոհմային անվանումը։ Այսպես, օրինակ՝ Նոյեմբերյանի շրջանի հինգ գյուղում (բուն Նոյեմբերյանում, Կոթի և Ղոշգոթան գյուղերում) կան նույն ազգանունը կրող ազգատոհմեր, օրինակ՝ Բարանը կամ Մամյանները։ Բանասացներին հարցափորձելիս՝ այդ ազգատոհմերն արդյո՞ք միևնույն ազգատոհմի ճյուղավորումներն են, մենք ստանում էինք հակասական պատասխաններ. ոմանք կարծում էին, թե դրանք նույն ազգն են, ուրիշները, թե բոլոր երեք ազգատոհմն էլ բոլորովին ինքնուրույն են։ Ենթադրում ենք, թե նշված երեք ազգատոհմը ժամանակին կազմել են մի ազգատոհմ հետագայում անջատված ընտանիքները վերածվել են ինքնուրույն ազգերի և ներկայումս նրան-

ցից յուրաքանչյուրը հաշվվում է վարընթաց գծով յոթից-ութ սերունդ։ Նման պրոցեսը պետք է բացատրել, ըստ երևույթին, նրանով, որ ազգատոհմի նոր ճյուղերը տերիտորիապես անջատվելով, դրանով իսկ կորցրել են ընտանեական-ազգակցական ազգատոհմ խմբավորումը բնորոշող հիմնական որոշիչ գծերը, որոնց մասին կասվի ստորև։

Բուն ազգատոհմն ներսում ավելի նեղ ազգակցական խմբավորում են հանդիսանում ազգատոհմի հիմնագրի որդիների ճյուղավորումները այն դեպքում, երբ դրանք մի քանիսն են։ Այսպես, օրինակ՝ հիշյալ Բաբանց ազգատոհմում կա չորս ներազգի ճյուղ, սկիզբ առած Բաբի չորս թոռներից՝ Խաչատուրանք, Արաղանք, Ալեքսանանք և Պասլանք։ Իրենց տոհմային պատկանելությունը ցույց տալու համար, ասում են, թե Բաբանց ազգատոհմի Խաչատուրանց կամ Ալեքսանանց և կամ այլ ճյուղից են։ Այդ ավելի նեղ ընտանեական-ազգակցական խումբը, ի տարբերություն ազգատոհմից, տեղական խոսվածքում անվանվում է բարուն կամ բիրա։ Առաջինը՝ թարունը, իրանական տերմին է, նշանակում է սերմ և Կովկասի շատ ժողովուրդների մեջ այն գործածվում է տոհմի, պատրոնիմիայի իմաստով, երկրորդը՝ թիրան լիովին համընկնում է իր թուրքական «ճյուղ», «գիծ» նշանակությանը։ Ազգատոհմի մեջ առանձնացվում է էլ ավելի նեղ խմբավորում, քան թարունն ու թիրան են, դա այն խումբն է, որի մեջ մտնում են եղբայրների և նրանց որդիների ընտանիքները՝ ուղիղ վարընթաց և խոտորնակի գծերով. դա կոչվում է բիձոնք՝ «հորեղբայրների խումբ»։

Դեռևս անցյալ դարի վերջին, ազգատոհմը պահպանել էր տերիտորիալ, տնտեսական և գաղափարախոսական ընդհանրության տարրերը։ Վերը արդեն խոսվեց գաղափարախոսական ընդհանրության մնացուկային ձևերի՝ ազգատոհմի ոչ այնքան հեռավոր նախահայր-հիմնադրին վերաբերող հիշողության պահպանման, ընդհանուր նախահոր անվամբ համազգի անվանման կայունության մասին։

Հարկավոր է նշել նաև առանձին համազգատոհմային գերեզմանոցային տեղամասերի գոյությունը, որոնք նույնպես, ինչպես և ազգատոհմի բնակմասերը գյուղում, կոչվում են թաղ, իսկ նույն շրջանի Կոթի գյուղում գիտարշավախումբը առաջին անգամ դրառել է առանձին ազգատոհմերի գերեզմանոցների գոյության փաստը։ Այդպիսին է Ամիրխանյան ազգի գերեզմանոցը, որի կողքին անցյալ դարի վերջում եղել է ժամանակին մի ազգատոհմ կազմած Ամիրխանյանների, Ազիզրիկյանների ու Շահնազարյանների թաղը։ Նման գերեզմանոցներից յուրաքանչյուրում եղել է պաշտամունքային փոշնի ծառը։

Ազգատոհմ ընտանեական-ազգակցական կոլեկտիվը պահպանել է նույնպես ազգակցական թաղերի գոյությամբ դրսևորվող տերիտորիալ ընդհանրությունը։ Ազգակից ընտանիքները ջանացել են բնակավորվել միմյանց կողքի։ Եվ թեև անցյալ դարի վերջին, բաժանքի հետևանքով նոր կազմված ընտանիքները, տեղ չունենալու պատճառով ստիպված էին լինում բնակավորվել ազգովի թաղից դուրս, այսուհանդերձ, դրանք նոր, ճիշտ է արդեն ավելի նեղ՝ վերը հիշված և մինչև այժմ գոյություն ունեցող «բիձոնք» ազգակցական խմբավորմամբ, ազգակցական թաղ կազմելու միտում էին ցուցաբերում։ Հետազոտված շրջանում ազգատոհմային թաղերը կորցրել էին իրենց միատարրությունը՝ տները խառնվել էին ուրիշ ազգատոհմերի տների հետ։ Ազգովի թաղերին վերաբերող

հիշատակությունը պահպանվել էր Բարանց թաղ, Գիշոնց թաղ, Մրաղանց թաղ և այլ անվանումների մեջ։

Թաղ-ազգի ընակվածության կարգը անցյալում նշանակալից դեր է խաղացել գյուղի արտադրական և հասարակական կյանքում, իսկ դրա որոշ մնացուկներն զգալի արդելակող գործոն են հանդիսացել կոլտնտեսությունների կազմակերպման շրջանում, բրիգադները տերիտորիալ սկզբունքով կազմակերպելիս, երբ գյուղի այս կամ այն թաղն ընդգրկող բրիգադը գրեթե ամբողջովին ազգակիցներից բաղկացած էր դուրս գալիս։

Լոկալ միասնության սկզբունքը պահպանվում էր ամռանը սար գնալիս։ Ամառային արոտավայրերում ազգակից ընտանիքները տնակներ էին շինում միմյանց կողքի։ Ըստ որում, եթե գյուղերում, տերիտորիալ հնարավորությունների բացակայության հետևանքով, ազգատոհմերի թաղերն արդեն խախտված էին, արոտավայրերում ազգատոհմի լոկալ միասնությունը դեռևս 20-րդ դարի սկզբին շարունակում էր պահպանվել։

Ազգատոհմը 19-րդ դարի վերջին դեռևս պահպանում էր գույքային և արտադրական ընդհանրության տարրերը, որոնք հիմնականում արտահայտվում էին հողատիրության ձևերի և արտադրական ընկերությունները ազգովի սկզբունքով կազմակերպելու մեջ։

Նոյեմբերյանի շրջանի գյուղերում հողը դառնվել է առանձին գյուղացիական ընտանիքների ժառանգական տիրության ներքո, ի տարբերություն Հայաստանի այն շրջանների, ուր հողը գյուղացիների օգտագործման ներքո է եղել։ Հողի սեփականության այդ իրավունքը ձեռք է բերվել ծառերը արմատախիլ անելու միջոցով անտառային խամահատներ բացելու հետևանքով։ Առաջին բնակիչները հողանդակները յուրացրել են, ավելացնելով դրանք հարկավոր չափով, անտառային նոր բացատներ հարդարելու հաշվին։ Ժամանակի ընթացքում, երբ անտառները ամբողջովին յուրացվել են, հողանդակները բաժանվել են այդ հողի ժառանգորդ-ընտանիքների թվին համապատասխան։ Չնայած հողը, որպես պապերի ձեռք բերած սեփականություն, դառնվել է առանձին ընտանիքների փաստական տիրության ներքո, այն համարվել է համազգատոհմի սեփականություն։ Մինչև այժմ ծերունիների հիշողության մեջ պահպանվում են վարելահողերի ազգովի անվանումները, այսպես՝ Բարանց հանդեր, Գիշոնց հանդեր, Մեհվաղանց հանդեր և այլն։

Հողանդակների համազգատոհմային տիրության մնացուկ է հանդիսանում ինչպես տնամերձ, նույնպես և վարելու հողակտորները առանց ամբողջ ազգատոհմի համաձայնության վաճառելու իրավունքի բացակայությունը։ Առանց ազգատոհմի համաձայնության, առանձին ընտանիքի վաճառած հողը կարող էր վիճարկվել ազգի ամեն մի անդամի կողմից։ Ծուխը մարելու դեպքում, նրան պատկանած հողակտորը առաջին հերթին անցնում էր մերձավոր ազգակից ընտանիքներին, որոնք միմյանց միջև հավասար ախպերարաժին էին անում այն, իսկ եթե չկային այդպիսիք, ապա այդ հողի նկատմամբ իրավունք էր ունենում մահացածի ամեն մի հեռավոր ազգական, որպես այդ ազգատոհմի անդամ։

Որբերի հողերը անցնում էին այն ազգականի ժամանակավոր օգտագործմանը, որը պարտավորություն էր ստանձնում պահել և դաստիարակել որբին մինչև նրա չափահաս դառնալը, որից հետո վերջինս դառնում էր հայրական հողի սեփականատերը։ Թված բոլոր, մասնավորապես ժառանգության, գնման իրավունքի, վաճառքի հարցերը կարգավորվում էին բուն ազգա-

տոհմի, սովորաբար տվյալ ազգատոհմի մեջ մտնող տանտերերի, բոլոր ընտանիքների գլխավորների կողմից և կարիք չէին զգում որևէ այլ ձևակերպման։ Հողակտորները, ճիշտ այնպես, ինչպես շարժական և անշարժ ունեցվածքի բոլոր տեսակները, անկախ բաժանվող ընտանիքների անդամների թվից, հավասար ախպերաբաժին են արվում, ի տարբերություն Հայաստանի այն շրջանների, ուր հողը գտնվում էր գյուղացիների օգտագործման ներքո և գյուղական համայնքը, պարբերական վերաբաժանումների միջոցով, կարգավորում և վերահսկում էր գյուղացիական ընտանիքի առկա անձերի թվին համապատասխան ընկնող բաժնի հողակտորների չափերը։

Հողից բացի, Նոյեմբերյանի շրջանի գյուղերում ազգատոհմային սեփականություն են հանդիսացել ընկույզի ծառերը, որպես երկարակյացներ, նույնպես և արտադրության թանկ արժեցող միջոցները, ինչպես օրինակ՝ ջրաղացները։ Այսպես, բուն Նոյեմբերյանում հաշվվել է տասնչորս ջրաղաց և դրանք բոլորը համարվել են ազգատոհմային, ժառանգվել են ջրաղացները շինողների սերունդների կողմից ախպերաբաժնի սկզբունքով։ Այդ ջրաղացների ազգատոհմային անվանումները՝ Արուինանց, Փափախչոնց, Մրաղանց, Գիշոնց և այլն, մինչև այժմ պահպանվում են։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում համազգի ջրաղացներից օգտվելու կարգը։ Ազգատոհմային ջրաղացները երկակի են շահագործվել։ Այսպես՝ Մրաղանց ջրաղացը օգտագործվել է հետևյալ կերպ՝ վարձվել է ջրաղացպան, նրան վճարվել է եկամտի մեկ երրորդը, իսկ երկու-երրորդը սկզբում երկու ախպերաբաժին է արվել՝ ջրաղացը կառուցող Մրաղանց ազգատոհմի հիմնադրի երկու որդիների վրա, ապա թիրայի ներսում այդ կիսաբաժինները ախպերաբաժին են արվել տվյալ թիրայի մեջ մտնող բոլոր ընտանիքների միջև։

Ազգատոհմային ջրաղացների շահագործման մյուս եղանակը, դա այն օրերի բաժանումն է ազգատոհմի թիրա-ցյուղերի միջև, որոնց ընթացքում ջրաղացը կարող էր օգտագործվել, և այս կամ այն թիրային բաժին ընկնող օրերի ընթացքում ապացվում էր այդ թիրայի բոլոր ընտանիքների հացահատիկը։ Այսպես, Մամյանների ջրաղացը օգտագործում էին չորս թիրան՝ Մամի չորս որդու ժառանգները։ Ամեն մի թիրայի հասնում էր տասնհինգ օր։ Եթե բազմանդամ թիրան չէր տեղավորվում իրեն բաժին ընկնող ժամկետում, նա կարող էր օգտվել մյուս թիրայի ազատ օրերից առանց որևէ վճարի։ Ջրաղացի հարկը հավասարապես բաժանվում էր ազգատոհմի բոլոր ընտանիքների միջև։ Ջրաղացների շահագործման նկարագրած ձևի մեջ դժվար չէ տեսնել արտադրության թանկարժեք միջոցների համատոհմային օգտագործման բավական հնագույն կարգը։

Ազգատոհմի արտադրական ընդհանրության մնացուկային ձևերից է աշխատանքային ընկերությունների՝ համգյալների կազմակերպումը։ Այդ ընկերություններն անցյալ դարի վերջին խառն կազմ ունեին, նրանց մեջ մտնում էին ինչպես ազգակից, նույնպես և հարևան ընտանիքներ, որը բացատրվում է ազգակցական թաղերի քայքայումով։ Ավելի վաղ ժամանակներում ընկերությունները կազմվում էին ազգատոհմային սկզբունքով։ Այդպիսի ընկերություններից է եղել գութանի համգյալությունը, երբ ազգակից ընտանիքները միացնում էին ամբողջ անհրաժեշտ գույքը, քաշող և աշխատող ուժերը և հերկում էին համգյալության բոլոր անդամների հողերը։ Այն դեպքում, երբ գույք կամ աշխատուժ չունենալու պատճառով ընտանիքը չէր կարողանում մտնել ընկե-

ության մեջ, նրա հողամասը հերկում էին առանց որևէ փոխհատուցման, իսկ այլոների հողամասերի հերկումը այդ ընկերությունների սուրբ պարտականությունն էր։

Համազգատոհմային օգտագործման ներքո էին գտնվում անասունների ամառային արոտավայրերը և ձմեռանոց-գոմահանդիպը։ Արոտավայրերը, ինչպես և հողանդակները կրում էին համազգատոհմի անվանումներ՝ Մեհվազանց գոմեր, Գիշոնց գոմեր, Բարանց թալա և այլն։

Այդ համազգատոհմային արոտավայրերի և ձմեռանոցների օգտագործումը կատարվում էր հետևյալ կարգով։ Տվյալ ազգատոհմի մեջ մտնող բոլոր ընտանիքների հոտերը միացվում էին միմյանց։ Սովորաբար անասունների բազմաքանակ հոտ ունեցող հարուստ ընտանիքը հովիվ էր վարձում կամ թե այդ պարտականությունը գրվում էր այդ ընտանիքի անդամներից մեկի վրա։ Ըստ որում յուրաքանչյուր ընտանիք սեզոնում մի գլխին վճարում էր 25 կոպեկ. եթե հովիվը ազգատոհմի անդամներից էր, այդ գումարը, բնականաբար, վճարվում էր նրան։ Յուրաքանչյուր ընտանիք ունենում էր իր նշանը՝ սովորաբար կտրում էին անասունի ականջը։ Մեծ հոտի տերը ունենում էր դրոշմ։

Նորաբաժան ընտանիքի համար նոր տան կառուցումը նույնպես համազգատոհմային պարտականություն էր։

Իր բոլոր հիմնական հատկանիշներով, վերը նկարագրած ազգատոհմը ոչ այլ ինչ է, եթե ոչ պատրոնիմա, որը հայտնաբերել է Մ. Օ. Կոսվենը Կովկասի շատ ժողովուրդների մեջ։

Մեր գրառած տեսքով ազգատոհմը գտնվելիս է եղել քայքայման վիճակում և, այդուհանդերձ, դեռևս անցյալ դարի վերջին ազգատոհմային հարաբերությունների վերապրուկային ձևերը գյուղի սոցիալական և արտադրական կյանքում չափազանց կարևոր տեղ էին բռնում, իսկ դրանցից մի քանիսը, ինչպես արդեն ասվել է, արգելակիչ դեր էին խաղում դեռևս գյուղի սոցիալիստական վերակառուցման տարիներին։

Ազգատոհմային հարաբերությունների համեմատական կայունությունը հետազոտված շրջանում մնում է բացատրել այդ շրջանի գյուղերում տիրապետած հողատիրության ձևով։ Փաստորեն առանձին ընտանիքների մասնավոր տիրության տակ գտնվող հողը համարվել է համազգատոհմային սեփականություն, որը ազգատոհմին իրավունք է տվել գյուղի ներսում կարգավորելու հողային հարաբերությունների հետ առնչվող բոլոր հարցերը։

Հողատիրության նշված ձև ունեցող գյուղերում ազգատոհմային հարաբերություններն ուժեղ էին համայնականից, որը, ըստ երևույթին, բացատրվում է առաջին հերթին նրանով, որ գյուղական համայնքի հիմնական ֆունկցիան՝ գյուղի ներսում հողային հարաբերությունների կարգավորումը, այստեղ գտնվել է ազգատոհմի իրավասության ներքո։